



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«18» 06 2024թ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 087 - 24

Նախաձեռնող՝

«ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Սյունիքի մարզ, ք. Գորիս, Վ. Մամիկոնյան փ., փուն 1

Գործունեությունը՝

«ՈՐՈՏԱՆ-7» փիէկի վերակառուցում

Սյունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 087 - 24

«18» հունիսի 2024թ.

«ՈՐՈՏԱՆ-7» փհէկի վերակառուցան աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝	«ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզի Սիսիան համայնքի, Գորայք բնակավայր

Ներածական մաս. «ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է իրականացնել շահագործվող «ՈՐՈՏԱՆ-7» փհէկի վերազինման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-110-Ն) օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ի կետի «բ» ենթակետի նշված գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի:

Փհէկի կառուցման համար ընկերությունը 2017թ. հունիսի 2-ին ստացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական փորձաքննական եզրակացություն՝ /ԲՓ-52/:

Ընկերությունը վերակառուցման նպատակով շրջակա միջավայրի նախարարությունից ստացվել է նոր ջրօգտագործման թույլտվություն՝ ՋԹ-N0274-22, որով ավելացվել է տրամադրվող փհէկի ջրաքանակը: Վերակառուցվող փհէկը կնպաստի ավելի շատ Որոտան գետի ջրերի օպտիմալ օգտագործմանը և ավելի շատ էլեկտրաէներգիաի արտադրմանը:

Նկարագրական մաս. Որոտան գետի ավազանն ամբողջությամբ գտնվում է Սյունիքի մարզում: Հայաստանի տարածքում գետի երկարությունը 129 կմ է, ջրհավաք մակերեսը՝ 2020 կմ²:

Որոտան գետը հանդիսանում է Արաքս գետի ձախակողմյա ամենախոշոր վտակներից մեկը և թափվում է վերջինիս մեջ գետաբերանից 236 կմ վերև: Գետի ամբողջ երկարությունը 194 կմ է, ավազանի ընդհանուր ջրհավաք մակերեսը կազմում է 5540 կմ²:

Գետն ունի խառը սնուցում, որը հիմնականում առաջանում է ձնհալքից և աղբյուրներից, իսկ որոշ տարիների նաև անձրևներից, առավելագույն ելքերը դիտվում են ապրիլ-հունիս ամիսներին:

Այն սկիզբ է առնում երկու փոքր լճակներից, այնուհետև իր ճանապարհին ընդունում է բազմաթիվ աղբյուրների հոսքերը:

«ՈՐՈՏԱՆ-7» փհէկը գտնվում է Սյունիքի մարզում, Սիսիան համայնքի, Գորայք բնակավայրի վարչական տարածքում՝ Որոտան գետի ձախ ափին:



Գորհայք-Որոտան դիտակետի հեռավորությունը փհէկ-ից կազմում է մոտ 10,0 կմ, որը գտնվում է փհէկ-ից վերև, Սպանդարյանի ջրամբարի մոտ:

Որոտան գետի ավազանի վերին նիշերում տարածված է մարգագետնա-տափաստանային, իսկ միջին հոսանքում, որտեղ նախատեսվում է փհէկի կառուցներն են՝ տափաստանային բուսականություն:

Հայցվող տարածքի հողերն աղտոտված չեն, մեծ մասամբ քարքարոտ են, էրոզացված, շինարարության համար նախատեսվող տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Փհէկի ենթակառուցվածքների և հարակից տարածքներում բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսերի և կենդանիների տեսակները, բնության հուշարձանները:

Փհէկի վերակառուցման համար նախատեսվում է իրականացնել ճնշումային խողովակաշարի անցկացում նոր փհէկի շենք և տրանսֆորմատորային ենթակայանի կառուցում: Մնացած բոլոր ենթակառուցվածքները գոյություն ունեցող են:

Գործող «ՈՐՈՏԱՆ-7» փհէկի հիմնական պարամետրերն են՝

հաշվարկային հզորությունը՝ $N=1320$ կվտ,

ստատիկ ճնշումը՝ $H_u=24,9$ մ,

հաշվարկային ելքը՝ $Q=7,0$ մ³/վրկ:

Միջին տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը՝ $N=3,58$ մլն.կվտ.ժ:

«ՈՐՈՏԱՆ-7» փհէկ-ի հիմնական պարամետրերը վերակառուցումից հետո կլինեն՝

հաշվարկային հզորությունը՝ $N=2451,0$ կվտ,

ստատիկ ճնշումը՝ $H_u=49,1$ մ,

հաշվարկային ճնշումը՝ $H=40,7$ մ,

հաշվարկային ելքը՝ $Q=7,0$ մ³/վրկ:

Միջին տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը՝ $N=5,37$ մլն.կվտ.ժ:

Գործունեության համար նախատեսված տարածքի տեղադիրքի վերաբերյալ կոորդինատային տվյալները՝ WGS-84 ազգային գիողեզական կոորդինետային համակարգով՝

1. $X=4395029,5464$ $Y=8566569,2517$

2. $X=4395044,1769$ $Y=8566589,5236$

3. $X=4395011,7418$ $Y=8566612,9324$

4. $X=4394997,1114$ $Y=8566592,6605$

1. $X=4395029,5464$ $Y=8566569,2517$

Ըստ ՋԹ-ի ջրառի կետի կոորդինատներն են՝

$X=45^\circ 46' 09,00''$

$Y=39^\circ 42' 15,30''$

$H=2126,0$ մ:

Ջրահեռացման կետի կոորդինատներն են՝

$X=45^\circ 46' 32,78''$

$Y=39^\circ 41' 15,10''$

$H=2076,0$ մ

«ՈՐՈՏԱՆ-7» փհէկի մեջ են մտնում հետևյալ հիմնական կառուցվածքները՝

- պատվարային ջրընդունիչը,
- ճնշումային դերիվացիոն խողովակաշարը,
- փհէկի շենքը:

Ջրառի կետն ապահովված է ջրաչափական դիտակետով, ջրաչափով և կապարակնքված է:

Պտվարային ջրընդունիչը կառուցված է Որոտան գետի վրա 2126,0մ նիշում, իրենից ներկայացնում է բետոնային ջրթափային կառուցվածք, որի պատվարի աջ կողմում կառուցված է ջրընդունիչ և տղմազտիչ, որոնց մուտքամասում տեղադրված են հարթ փականներ:



Ներկայումս հաշվային ելքը վերցվում է բետոնյա բաց ջրանցքով, որը լցվում է գոյություն ունեցող ճնշումային ավազանի մեջ /2125,1 մ/:

Լվացման սրահը նախատեսված է վերին բիեֆում կուտակված կոշտ ջրաբերուկները լվանալու համար, ինչպես նաև առավելագույն ելքերը ներքին բիեֆ հեռացնելու համար:

1. Պատվարային /ջրթափային / ներքին բիեֆում նախկինում նախատեսված է եղել ջրծեծ հոր, որտեղ մարվում են ջրի ավելցուկային էներգիան:

2. Պատվարային ջրընդունիչի բետոնային ջրթափային պատվարն ունի երեք սեկցիա, որոնց ջրթափային մասով հեռացվում են ավելցուկային ջրերը դեպի ներքին բիեֆ: Ներքին բիեֆի նիշը կազմում է 2076,00 մ: Պատվարային ջրընդունիչի ծախս կողմում կառուցված է ձկնուղի: Գոյություն ունեցող պատվարային ջրընդունիչի մեջ տեղադրված է ձկնանցարան, ինչը նախատեսված է ապահովելու ձկների տեղաշարժը վերին բիեֆից ներքին բիեֆ և հակառակը, երկարությունը կազմում է 27,20 մ, իսկ լայնությունը 1,5 մ, ձկնանցարանը համապատասխանում է ՍՆԻՊ 2.06.07-87-ին:

3. Գոյություն ունեցող ճնշումային ավազանից 2125,1 մ նիշում երկճյուղ ճնշումային խողովակով (երկարությունը՝ 185,0 մ, տրամագծերը համապատասխանաբար 1400 մմ), հաշվային ելքը մուտք է գործում փիեկում տեղադրված հիդրոագրեգատներ: Ձկնուղու միջոցով բաց է թողնվում բնապահպանական ելքերը՝ որը սահմանված է ջրօգտագործման թույլտվությամբ և կազմում է 1270-2350 լ/վ (նվազագույն ելքը 1270 լ/վրկ): Նոր կառուցվող ճնշումային դերիվացիոն խողովակաշարը նախատեսվում է 2125,1 մ նիշում: Գոյություն ունեցող ճնշումային ավազանից երկճյուղ ճնշումային խողովակները, որոնցից յոթաքանչյուրի երկարությունը 185,0 մ է, նախատեսվում է միացնել իրար, այնուհետև ճնշումային խողովակը, որը կլինի 1,80մ տրամագիծով և 1388,0 մ երկարությամբ, կվերջանա խարսխային հենարանով, որի չափերը հատակագծում կկազմեն 15,0*3,0 մ, իսկ բարձրությունը 2,5 մ:

Փհէկի նոր շենքը կառուցվելու է Որոտան գետի ծախս ավին: Շենքը նախատեսված է վերգետնյա տիպի, շենքի չափերը որոշված են ըստ ագրեգատների չափերի և նրանց օժանդակ սարքավորումների դասավորության, որտեղ կտեղադրվի երեք հիդրոտուրբիններ բաղկացած ռեակտիվ շառավղա-առանցքային տուրբիններից ու սինխրոն գեներատորներից՝ «Cink hydro» արտադրության, առաջին հիդրոագրեգատի հզորությունը կլինի՝ 1000 ԿՎՏ, երկրորդ հիդրոագրեգատինը՝ 800 ԿՎՏ, երրորդ հիդրոագրեգատինը՝ 800 ԿՎՏ, որոնց գեներատորները նախատեսված են՝ եռաֆազ, սինքրոն, ընդհանուր դրվածքային հզորությունը կլինի 2600 ԿՎՏ: Երեք հիդրոագրեգատները կունենան ավտոմատ կարգավորման և ղեկավարման համակարգ, հիմքերը կլինեն երկաթբետոնից: Հիդրոագրեգատների աշխատանքը նախագծված է ավտոմատ ռեժիմով, ըստ ջրի քանակի ու առաջացող հզորության: Ղեկավարման, ավտոմատացման և հսկողության կայանային սարքավորումները կապահովեն կայանի աշխատանքն ավտոմատ ռեժիմով:

Շենքում կտեղադրվի էլեկտրական կամրջային ամբարձիչ 10,0տ բեռնաբարձությամբ: Փհէկի օգտագործած ջրերը կհեռացվեն դեպի գետ՝ ուղղանկյուն կտրվածքի հեռացնող ջրանցքով:

Փհէկի հաշվային ելքը վերցվում է պատվարային ջրընդունիչից սկիզբ առնող ճնշումային խողովակաշարից և փհէկի շենքից հետո վերադարձվում է գետ, առանց որակի ու քանակի փոփոխության:

Փհէկի օգտագործած ջրերը հեռացվում են դեպի գետ ուղղանկյուն կտրվածքի հեռացնող ջրանցքով:

Քանի որ նախագծվող փհէկի շենքի հիմնատակը ժայռային գրունտներ են, գետի ավին հենապատ չի նախատեսվում:

Փհէկի հին շենքն օգտագործվելու է որպես պահեստ:



Շենքի հարևանությամբ նախատեսվում է տեղադրել 4000 կՎԱ հզորությամբ 10/35 ենթակայան, որը 35 կՎ էլեկտրոհաղորդման գծով կմիանա գոյություն ունեցող 35կՎ էլեկտրահաղորդման գծին: Նախատեսվող 35 կՎ էլեկտրոհաղորդման գծի երկարությունը կլինի 250 մ: Ենթակայանում նախատեսվում է յուղհավաք հոր, յուղընդունիչ, որտեղ հավաքված յուղը 150 մմ պողպատյա խողովակով կհեռացվի յուղհավաք բաք, որտեղից պարբերաբար կհեռացվի լիցենզավորված կազմակերպության կողմից:

Վերակառուցման աշխատանքների իրականացման ընթացում հողային աշխատանքների ծավալները կկազմեն՝ բնահողի մշակում գլաքարա-խճային գրունտներում՝ 780 մ³, շահագործման ճանապարհի շեպերի ուժեղացում ավելցուկային գրունտներից՝ 780 մ³: Ավելորդ գրունտը նախատեսվում է փոխադրել համայնքապետարանի կողմից տրամադրված վայր:

Շինարարության և շահագործման փուլում տեխնիկական և խմելու ջուրը նախատեսվում է բերել Սիսիան համայնքից պայմանագրային հիմունքներով:

Վերակառուցման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա (մթնոլորտային օդ, հողային, ջրային ռեսուրսներ կենսաբազմազանություն, հայտում ներառված է բնապահպանական գնահատման ստուգաթերթիկ) որոնց բացառման, նվազեցման, կանխարգելման համար նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնցից են՝

Մթնոլորտային օդի պահպանության համար շինարարական աշխատանքները կատարելիս /հիմնականում հողափորման և գրունտային ճանապարհով մեխանիզմների և մեքենաների շարժ/ հողի և ավտոճանապարհների ջրցան մեքենաների միջոցով մակերեսների խոնավացում:

Հողային ծածկույթը բացասական ազդեցությունից զերծ պահելու նպատակով նախատեսվում է բնապահպանական միջոցառումներ, որոնցից են՝ խողովակների բաց հատվածների ներկման ժամանակ հատուկ հսկողություն՝ հողի աղտոտման ռիսկը կանխելու համար:

Պատրաստի բետոնախառնուրդի լցանյութերը ձեռք բերում համապատասխան հարստացման ձեռնարկություններից:

Թափոնների արդյունավետ և հաճախակի հեռացում, խուսափում հրապարակի տարածքում դրանք վառելուց և այլն:

Բուսական աշխարհի պահպանության իրականացում՝ համաձայն կառավարության 2014թ. թիվ 781-Ն որոշման դրույթների:

Ցամաքային կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով շինարարական աշխատանքների իրականացում ձվադրման և վերարտադրման ժամանակաշրջանից դուրս/ գարնանը՝ ապրիլ-մայիս ամիսներին/:

Հայցվող տարածքներում կենդանիների միգրացիայի ուղիներ առկա չեն: Նախատեսվում է բուսական, կենդանական աշխարհի պահպանության համար մի շարք այլ բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են հայտում: Աշխատանքների իրականացման ընթացքում ծառահատում նախատեսված չէ:

Վերակառուցվող փիհէկի աշխատանքները չեն վնասի տեղի բուսականությունը: Նախատեսված է կանաչապատման և բարեկարգման, փիհէկի շենքի տարածքում տեղանքի հարթեցման աշխատանքներ:

Քանի որ փիհէկ-ում տեղադրված հիդրոագրեգատները կունենան ավտոմատ կառավարման համակարգ՝ կաբացառվեն հնարավոր վթարները, Որոտան գետով՝ պատվարային ջրընդունիչից ջուր մուտք չի գործի ճնշումային խողովակաշար:

Աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ շինարարության փուլում ավտոտրանսպորտային միջոցները, քանի որ դրանց երթևեկության ինտենսիվությունը շատ ցածր է, աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ լինի: Աղմուկի աղբյուր կարող



շահագործման փուլում փհէկի հիդրոագրեգատները, որոնք տեղադրված են փակ տարածքում, և աղմուկը կգտնվի նորմայի սահմաններում: Աշխատանքային հրապարակում առաջացող աղմուկի նվազեցման նպատակով մեքենաները սարքավորված կլինեն ձայնախլացուցիչներով և այլն: Նախատեսված բոլոր բնապահպանական միջոցառումներ նակարագրված են հայտում:

Նախատեսվող աշխատանքների ընթացքում առաջացած թափոնները հիմնականում պատկանում են վտանգավորության 3-րդ և 4-րդ դասերի՝ յուղոտված լաթեր, կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի), բանեցված կոմպրեսորային յուղեր, չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ, շինաշխատանքներից առաջացած շինարարական աղբ: Թափոնների ծածկագրերի, քանակի, ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը տրված է հայտում:

Հայտով շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների համար նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ, որոնցից են՝

- շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար հավաքման վայրերի և հեռացման ուղիների նախապես որոշված լինել,
- գոյացող թափոնների տարանջատում ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռևս շինհրապարակում և տեղափոխում հատկացված աղբավայր,
- վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերի մշակում և իրականացում,
- վտանգավոր արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով առաջացած հետքերի մաքրում և այլն:

Փհէկի շահագործման անձնակազմի համար նախատեսվում է բիոզուգարան, ինչը կտեղափոխվի աէրացիա և կմաքրվի:

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ծախսերը, կկազմեն 2300,0 հազար ՀՀ դրամ:

Փհէկի վերակառուցման արդյունքում՝ գետի էկոհամակարգի և գետի ձկնաշխարհի վրա հնարավոր փոփոխություն չի ակնկալվում:

Փհէկի շենքի շինարարության ավարտից հետո, նրա տարածքը կցանկապատվի և կկանաչապատվի, կտնկվի ևս 500 ծառ: Նախատեսվում է տնկել տարածաշրջանին բնորոշ ծառեր և թփեր, որոնց կազմը կհամաձայնեցվի համայնքապետարանի հետ: Նախատեսված է նաև փհէկի շենքի մոտակայքում 100 քառ.մ մակերեսով կանաչապատման աշխատանքների իրականացում:

Պարճառաքանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Գորայք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Փորձաքննական պահանջներ

1. Անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15 հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների



սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

2. Համաձայն Ջրային օրենսգրքի՝ էկոլոգիական թողքի կետերը պետք է կահավորված լինեն տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերով, ապահովելով Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N2207-Ն որոշման պահանջները, ջրընդունիչ հանգույցում /բնապահպանական թողքի և փիէկի ջրառի կետեր/ ապահովել ջրաչափիչ սարքավորումներ, որոնք կահավորված կլինեն ավտոմատ կառավարման և առցանց վերահսկման համակարգերով:

3. Ապահովել կանաչապատման աշխատանքների իրականացումը: որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների անհարժեշտ խնամքը և տնկված ծառերի ոռոգումը:

4. Ապահովել ջրառ հանգույցում մոնիթորինգի միջոցառման իրականացումը և պահպանել գետի և շրջակա տարածքների սանիտարական վիճակը, առաջացող տարբեր տեսակի թափոնները /կենցաղային աղբ, տրանսֆորմատորային յուղ և այլն/ հեռացնել սահմանված կարգով:

5. Փիէկի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել «ՀԳՆԲ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից Գորայք բնակավայրում նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ՀԳՆԲ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կոմից «ՈՐՈՏԱՆ-7» փիէկի վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական փորձաննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Նելլի Նասիբյան